ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ջայլամն [1] :

ԱՌԱՁՆՈՑ մէջ ամենէն մեծը Ջայլամն է, եօթնէն ինչուան ութը ոտք հասակը կը բարձրանայ, և կրնայ 80 լիպրէ ծանրութիւն կշռել։ Աչունքներուն և վզին երկայնութիւնը, ինչպէս նաև զանազան բնաւորութիւնը՝ ուղտի նմանութիւն ունի. ինչուան ըսին թէ ուղտի պէս կուզ ալ ունի, որ իրաւ չէ. բայց բոլոր այս չափազանցութիւնները կամ ծուռ կարծիքները մէկդի ձգելով՝ արարածոց կարգին մէջ Ջայլամը կապակցութիւն մըն է թռչնոց և չորքոտանեաց մէջ տեղը։ Ի՞նչ թևերը թռչելու չգար. բայց բոլոր ճանչցուած կենդանեաց մէջ ամենէն աւելի արագընթացն է։

Աւրիշ թռչնոց պէս իրեն դրսի կերպարանքն ալ նշանաւոր է։ Գլուխը խիստ պզտիկ, որուն վրայի կողմը ճաղատ ու կոշտ է, իսկ վարի կողմը ցանցառ ու փայլուն փետուրներով զարդարուած։ Կտուցը շիտակ, կարճ և հորիզոնական դրքով տափկած է լայն բացուածքով մը։ Ի՞նչանչները յայտնի կը տեսնուին, աչուքները խոշոր, վառվռուն և անանկ դրքով կեցած են որ նոյն առարկաները երկուքը մէկէն կը տեսնէն. վերին արտևանունքը շարժուն են և յօնքեր ունի։ Պիզը, որ բարակ և գրեթէ իրեք ոտք երկայն է, գլխուն երևելի կողմին պէս մաղերով ու կապտագոյն մի գոյն մորթով պատած է։ Ականի պէս թևերը երկու խայթոց ունի. որուն փետուրները փափուկ են կակուղ կոթի վրայ, իրարմէ հեռու պզտի փետրիկներ բաղկացած. անանկ որ մէկմէկու հետ չեն խառնուիր. որով կ'իմացուի թէ ինչու համար աս թևերը թռչելու չեն գար. նոյն կազմութիւնն ունին նաև պոչին փետուրները։ Իսկ զիստերը [2], և թևերուն վարի կողմը, ուր որ մորթը կարմրագոյն ճերմակ է, փետուր չկան. սրունքները կոնճմտած մորթով մը պատած է, որուն զօրութիւնը կարգէ դուրս բան մըն է։ Ոտուքները ջղոտ և հաստը խեցիով մը պատած, դէպ 'ի առջև երկնցած է երկու մատուքներ, իւրաքանչիւրը իրեքական ոսկրունենալով, և կարծը թաղանթով մը կպած է վարի կողմէն որ կ'երթայ կը միանայ ինչուան ոսկրին առաջին յօդուածը։ Երբին մատը միայն, որ շատ աւելի երկայն է քան զարտաքինը, կարճ ու բթացած եղունգ մը ունի։

Իսկ ներքին կազմութեան և ոսկորներուն կողմանէ, Ջայլամը թռչուններուն չնմանիր, այլ չորքոտանեաց կը մօտենայ արժանի դիտողութեան շատ մասնաւոր յատկութիւններով։ Իր լեզուն որ խիստ կարճ է, ձիու պայտի [3] ձև ունի, և ետևի կողմէն դուրս ցըցուած։ Կուրծքին դիմացի տափակ ոսկրը, որ կը կոչուի լանջոսկր [3], ուրիշ թռչնոցը նաւու ողնափայտի կը նմանի, այսորը տեսակ մը վահանի ձև ունի, որ յարմար է իրեն շարժմանցը. պառկելու համար ստիպուած է նախ և առաջ ծունկը ծռել, վերջը լանջոսկրին վրայ կռթընիլ, և ետքը բոլոր մարմնոյն վրայ։ Ջայլամը որոճող կենդանեաց պէս իրեք ստամոքս ունի։

Ի՞նչ զգայարանքները քննելով, քթին բաղադրեալ կազմութիւնը եթէ նայինք՝ կրնայ կարծուիլ՝ որ շատ կատարեալ հոտառուի ունենայ, բայց ամենևին անանկ չէ. վասն զի աս զգայարանքը, որ կենդանիք իրենց կերակուրը ճանչնալու կը գործածեն, Ջայլամինը այնչափ չափաւոր է, որ երկաթը, գայլախազը, ասպակին, և ինչուան հոտած պղինձը կը կըլլէ. և ինչուան Ջայլամ եղած է որ խիստ շատ չմարած կիր ուտելով մեռնի. որն որ կը ցուցընէ թէ իրեն ճաշակելիքն

1 Գզ. Autruche. Տձ. Տեվե գոռլ։

1 Տձ. Պոռ։
2 Տձ. Նուլ։
3 Լ. Sternum.

Ջայրաւն :

ալ ոչ ինչ նուազ Հոտոտելիքէն Թանձր է. և իրաւցընէ իր լեզուին վրայ ամենևին ջղային մաշկի նշան չտեսնուիր։ Սակ լսելիքի կողմանէ, ականջին գործարանը աղէկ շինուած է, խիստ լաւ կը լսէ, նաև աչուրներն ալ սրատես են։

Ի՛ արուինը և Թէ էգին աչքին ծիածանը կաղնիի գունով են, և կտուցը եղջիւրի գունով, բայց 'ի ծայրէն որ սևակակ է։ Ոչ զին վարի կողմը, կռնակը, կուրծքը և՝ փորը սև փետուրներ ունի քիչ մը Ճերմակախառն և մԹագոյն. Թևերուն և պոչին խոշոր փետուրները ամենագեղեցիկ Ճերմակ գոյն ունին. ոտուրները մԹագոյն. բայց արուն և էգը իրարմէ քանի մը տարբերուԹիւն ունին. էգինը սևորակ և կամ՝ մոխրագոյն կ'ըլլայ, իսկ արուինը պայծառ սև է, և պոչին ու Թևերուն փետուրներն ալ սևագոյն են։ Ձագերը առջի տարին մոխրագոյն կ'ըլլան. գլխուն, վզին և զիստին վրան փետուրներ ունին, բայց շուտ մը աս փետուրները կը Թափին ինքիրենմուն և ալ չեն բուսանիր։

Լ՝ոնց ձագ հանելու համար շինած բոյնի մը մէջ երբեմն շատ հաւկիթներ կը գտուի. ուսկից կը հասկցուի որ մէկ՝ շինած բոյնին մէջ այլ և այլ Ջայլամներ հաւկիթ կ՝ածեն։

Ջայլամը իր բոյնը աւազի մէջ խոռոչ մը բանալով կը շինէ, ուր որ առանց ուրիշ պատրաստութեան կը դնէ իր հաւկիթները. ընդհանրապէս կ՝երևնայ թէ 10ին ինչուան տասնըհինգ հաւկիթ կ՝ածէ իւրաքանչիւր էգ։ Հաւկիթները խիստ խոշոր են, իրեք չորս գաւաթ ջուր կ՝առնէ մէջը և երկու լիպրէէն աւելի կը կշռէ։ Այրեցած գօտիին տակը արևուն տաքութիւնը բաւական է թխսի նստելէն ազատելու զէգն և արուն, որ միայն գիշերները կը նստին թուխսի, և հաւանական կը կարծուի՝ գրեթէ վեց շաբաթի չափ։ Շուտ մը ձագերը ծնածնուն պէս կը սկսին քալել։ Որովհետև այրեցած գօտիին տակ իրենց յարմար տաքութիւնը և հարկաւոր ուտելիքը կը գտնեն, մայրերնին շուտ մը ձագերը երեսէն կը ձգէ բայց Արաբիոսոց գլուխը և քիչ տաք երկիրները մայրը անոնց կերակուրը կը Ճարէ, կը հսկէ և կտրըՃուքթ կը պաշտպանէ զանոնք ինչուան որ կարենան իրենք զիրենք հոգալու։

Գէպէտ և բնութիւնը իրեն կռուոց և պաշտպանութեան զօրաւոր միջոցներ տուած է, բայց ինքը վախկոտ է. միայն երբոր ստիպուի ինքը զինքը պաշտպանելու, ան ատեն իր կտուցը, թևերուն խայթոցները և ոտուրները կը գործածէ, որուն ուժը այնչափ է՝ որ շուն մը գետինը կրնայ պառկեցընել։ Բայց երբ քիչ մը ուժով ըլլայ իր թշնամին, Ջայլամը ան ատեն կը սկսի փախչիլ, մոռնալով և կամ չՃանչնալով իր ունեցած զարմանալի ուժը։ Այս ուժը այնչափ զօրաւոր է որ կռնակը մարդ ալ հեծնալու ըլլայ, մէկ աքանչելի սրընթաց ձիէ մը աւելի արագ կը վազէ։ Բայց աս կրթութիւն մըն է որուն պէտք է կամաց կամաց վարժեցընել զինքը, որպէս զի չխղդուի։ Ազելու ատեն Ջայլամը միշտ թևերը վերցուցած կը բռնէ, նժարի մը պէս որ վրայի մարմինը հաւասարակշիռ բռնէ և աւելի թեթևցընէ։

Խոտակեր է Ջայլամը և շատ անգամ Աֆրիկէի հարաւային կողմերը արածուելու կ՝ելլէ. անանկ որկրամոլ է և Ճաշակելիքի և հոտոտելիքի զգայարանքները անանկ բուռթ են, ինչպէս ըսինք վերը, որ անխտիր կենդանական և հանքային նիւթերը կը կլլէ, ինչուան որ՝ իր մեծ ստամոքսը լեցուի. իր ստամոքսին մէջ մաշած երկաթի կտորուանքներ կը գտնուի, իբր թէ ուրիշ պինդ մարմնոց հետ շփուած ըլլային, յայտ է որ կը մաշեցնէ ստամոքսական հիւթով մը։ Դիւվիէ մեծ բնապատումը Ռուսէոնի կենդանեաց դարմանատեղին մեռած Ջայլամի մը վրայ սոյն փորձը ստուգեր է, որ մարմնոյն մէջ գրեթէ մէկ լիպրէ ծանրութեամբ մաշած քարի, երկաթի կամ պղնձի և ստրկի կտորներ կայ եղեր։ Գէպէտ Արաբիա կ՝ըսեն թէ Ջայլամը ամենևին ջուր չխմեր, բայց աս վերի բաած Ջայլամն ամառը օրը չորս ստման ջուր կը խմէր, և ձմեռն ալ վեց, ներսը փակուած կեցած ատեն. բայց իրենց գիտութեան մէջ եղած աս փորձերով՝ արաբացւոց կարծիքը բոլորովին վար չիյնար։ Այս ազգերը ձիով կ՝որսան Ջայլամը, մանաւանդ երբոր ասոնք մեծ խումբերով կ՝անցնին կ՝երթան անապատները. որսորդները կը գիտեն ան ժամանակները՝ երբոր սաստիկ յոգնած կ՝ըլլան ասոնք, ու կը յարձակին վրանին ու կը բռնեն։ Ջայլամները փախչելու ատեն երբոր թափուտ անտառի կը հանդպին, կ՝երթան գլխընին թփոյն մէջը կը խոթեն, և կարծեն որ թշնամւոյն ձեռքէն ծածկուեցան, և այնպէս դիւրաւ կը բռնուին։ Ջայլամն տեսակ մը արիւնով ու Ճարպով խառնուած հիւթ մը կը հանեն, որ կ՝ըսուի մանիէ և ան երկիրները կերակուրը համեմելու և քանի մը հիւանդութեանց կը գործածեն։ Մովսէս արգելած էր հրէից որ Ջայլամին միսը չուտեն իբրև անասուրբ կերակուր։ Ձագերուն միսը երբոր պարարտ ըլլայ՝ կրնայ ուտուիլ, և կայսերաց ժամանակը հռոմայեցւոց

մէջ խիստ հասարակ բան մըն էր ասկէ կերակուր շինելը։

Բայց ամէն ատեն կը փնտռուին ջայլամին պոչին և թևերուն մեծ ճերմակ փետուրները. հինները զարդի տեղ և զինուորական կարգի պատուոյ համար գլուխնին կը դնէին, և աս սովորութիւնը դեռ շատ երկիր կը գտնուի։ Մինչը բաւական գիտեն թէ ասիկայ Եւրոպա վաճառքի մէջ կը բանի որ աւելի կանանց գլխարկի կը գործածեն, նոյնպէս ալ սաղաւարտի, կահկարասեաց, գահաւորակի, յուշարկաւորութեան հանդէսներու համար, և այլն։ Աւելի յարգի են անոնք՝ որ ջայլամին կենդանութեան ժամանակը փրցուցած են, և ասոնք կը ճանչցուին երբոր մատուրներովդ ճզմեն փետուրին եղեգնիկը, մէջէն արիւնագոյն հիւթ մը դուրս կ'ելլէ. իսկ անոնք որ մեռնելէն ետքը փրցուցած են՝ թեթև ու չոր են և որդնոտելու ալ խիստ ենթակայ։

ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Դաս ԺԹ. Օրէնք բաղկացութեան մարմնոց կամ բնապուծական զուգակշիռ։

Վալորը թթուածնի հետ հինգ գլխաւոր բաղկացութիւն կ'ըլլայ. ասոնց չափը քլորի միութեան այսինքն 443,2ին համեմատելով որն որ 12,5 ջրածնի հետ միանալով քլորաջրային թթու կը կազմէ ըսինք, կ'ըլլայ այսպէս.

Ա.	Թթու ենթաքլորական	Վալոր	443,2
		Թթուածին	100,0
			543,2
Բ.	Թթու քլորական	Վալոր	443,2
		Թթուածին	300,0
			743,2
Գ.	Թթու ենթաքլորային	Վալոր	443,2
		Թթուածին	400,0
			843,2
Դ.	Թթու քլորային	Վալոր	443,2
		Թթուածին	500,0
			943,2
Ե.	Թթու վերաքլորային	Վալոր	443,2
		Թթուածին	700,0
			1143,2

Եւրեմն Քլորին 443,2 կշռական չափը՝ որ 12,5 ջրածնի հետ միանալով քլորաջրային ընթացք կ'ընէ, նոյն չափը ենթաքլորական ընթացքի մէջ 100 մաս ընթացածնով կը միանայ, որ ասալ 12,5 ջրածնի հետ ջուր կը յառաջացնայ. իսկ միւս բաղկացութեանց մէջ քլորին չափը մնալով նոյնպէս 443,2, ընթացածինը երբեմն նախկին չափին կամ 100ին 3, 4, 5 և 7 ընթացքով բազմապատիկներովը կ'աւելնայ։ Ահա աս օրինակիս մէջ ալ մի և նոյն դէպքը կը գտնենք, ինչ որ ծծմբոյ և սելինիոն թթուածնի հետ բաղկացութեանց մէջ տեսանք։

Ինչուան հիմա բրոմի թթուածնի հետ երկու բաղկացութիւնը միայն կը ճանչնանք. ասոնց չափը բրոմի միութեանը կամ 978,0 չափին վերածելով՝ որն որ 12,5 ջրածնի հետ բրոմաջրային թթու կը ձևանայ, կ'ըլլայ